ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

Մեծ Մանթաշ 23. Հունվար 2019թ.

«Ծաղկահովիտի Համայնքապետարան» , այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս համայնքի ղեկավար՝ Ն. Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և Ա/Ձ Աշոտ Խլղաթյան , այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից (այսուհետ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Վաճառողը պարտավորվում է Գնորդին մատակարարել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է վճարել այդ ապրանքի համար:

1.2. Վաճառողը պարտավորվում է Գնորդին սեփականության իրավունքով պատկանող ավտոտրանսպորտային միջոցները լիցքավորել ՀՀ պետական ստանդարտների պահանջներին համապատասխանող սեղմված բնական գազով՝ ՀՀ Շիրակի մարզ,համայնք մեծ Մանթաշ 15 փողոց 19 հասցեում գտնվող գազալիցքավորման կայանում:

1.3. Պայմանագրի գործողության ժամկետը՝ 23.01.2019-31.12.2019թ.:

1.4. Վաճառողը ապրանքի մատակարարումը իրականացնում է Գնորդի կողմից հաստատված և կնքված միասնական նմուշի կտրոններին երկայացման հիման վրա:

## 2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Վաճառողի կողմից մատակարարվող մեկ խորանարդ մետր սեղմված բնական գազի գինը կազմում է 170 (մեկ հարյուր յոթանասուն ) ՀՀ դրամ՝ ներառյալ Ակցիզային Հարկը և Ավելացված Արժեքի Հարկը:

2.2. Վերոնշյալ կտրոնների հիման վրա , վաճառողի կողմից դուրս է գրվում էլեկտրոնային հարկային հաշիվ:

2.3. Գնորդը պարտավորվում է Վաճառողի կողմից ներկայացված՝ մատակարարված ապրանքի վերաբերյալ հարկային հաշիվը էլեկտրոնային եղանակով դուրս գրելուց հետո 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողի բանկային հաշվին փոխանցել համապատասխան գումարը:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1.1. Վաճառողը պարտավոր է՝

3.1.2. Գնորդի տրանսպորտային միջոցները լիցքավորել պատշաճ որակի սեղմված բնական գազով.

3.1.3. Գնորդի տրանսպորտային միջոցների լիցքավորման ընթացքում ապահովել լիցքավորման անվտանգության կանոնները.

3.2. Գնորդը պարտավոր է՝

3.2.1. Մատակարարված սեղմված բնական գազի դիմաց վճարել սույն պայմանագրի 2-րդ կետում նշված գինը.

3.2.2. Գազալիցքավորման համար վաճառողին տրամադրել համապատասխան նմուշի կտրոններ.

3.3. Գնորդը իրավունք ունի՝

3.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել մատակարարված ապրանքի որակը և համապատասխանությունը տվյալ ապրանքին ներկայացվող պետական ստանդարտների պահանջներին:

3.4. Վաճառողը իրավունք ունի՝

3.4.1. Հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Գնորդի վնասները լրիվ հատուցելու պայմանով:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համարկրում են գույքային պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5. Վեճերի լուծման կարգը

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված և կնքված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.2. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

## 7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| Ծաղկահովիտի Համայնքապետարան | Ա/Ձ Աշոտ Խլղաթյան |
| գ. Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան 2 | Մեծ Մանթաշ 15փ.19 գազ. |
| ՀՎՀՀ՝ 05022977 | ՀՎՀՀ՝ 81719398 |
| ՀՀ Ֆինանսների գործ. վարչություն | <<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>>ՓԲԸ |
| h/h 900482109023 | h/h 220229821511000 |
| Համայնքի ղեկավար | Ա/Ձ |
| Ն. Հակոբյան | Ա. Խլղաթյան |